

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Հունվարի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Էնթոնի Քենթորին:

«Ուրախ ենք, որ առիթն ունեցանք ճանաչելու Ձեզ, առիթներ ունեցանք համագործակցության, որ ավելի զորացրեց մեր կապերն ու հարաբերությունները»,- զոհունակությամբ նշեց Նորին Սրբությունը՝ իր բարեմաղթանքներն ուղղելով դեսպանին:

Միացյալ Թագավորության դեսպանն իր հերթին նշեց, որ պիտի կարոտի Հայաստանին և Սուրբ Էջմիածնին:

Հանդիպմանը խոսվեց նաև Հայաստանյայց Առաքելական և Անգլիական Եկեղեցիների միջև առկա կապերի և համագործակցության մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ